

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ
Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՊԱՏՐԻԱՐԷ
ԳԱՐԵԳԻՆ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ
ՎԵՐՋԻՆ ՕԾՄԱՆ ԵՒ ԹԱՂՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Միրելի՛ սգակիր Հոգեւոր եղբայրներ եւ սիրեցեալ՝ վշտակիր ժողովուրդ մեր, որ ի Կ. Պոլիս եւ ի Թուրքիա,

Սրտի անհուն վշտով եւ խոր Թախծով իմացանք Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Գարեգին Սրբազան Արքեպիսկոպոսի վախճանման գոյժը, քանզի անոր անվերադարձ մեկնումը այս տեսանելի աշխարհէն Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը՝ Սայր Աթոռ Ս. Էջմիածինը, եւ անձամբ Մենք կորսնցուցինք լծակից ու գործակից եղբայր մը, նախանձախնդիր պաշտպան մը մեր Եկեղեցւոյ աւանդութեան եւ կարգ ու կանոնի, խօսքի ու գրչի անխոնջ մշակ մը:

Իրապէս, ծանր է կորուստը, եւ սուգի մէջ է Համայն Հայց. Ս. Եկեղեցին, քանզի Կ. Պոլսոյ պատմական Աթոռը եւ Թուրքիոյ մեր Հայ ժողովուրդը Սրբազան Պատրիարք Հօր վախճանումով կը զրկուին իրենց իմաստուն, Հեռահայեաց եւ անձնուէր դահակալէն եւ Հոգեւոր Հօրմէն:

Աւելի քան կէս դարէ ի վերէ, որ անձամբ կը ճանչնայինք Սրբազան Պատրիարք Հայրը՝ իր սարկաւազութեան օրերէն սկսեալ: Այն օրերէն ի վեր Մենք իր մէջ տեսած էինք Հայց. Եկեղեցիին անքակտելիօրէն, գոյութեան պէս շաղախուած անձնդիր Հոգեւորականը: Անցնող յիսուն տարիներու ընթացքին ուրախութիւնն ունեցանք Հաստատելու, որ ան այդպիսին եղաւ իր առաքելութեան ամենատարբեր ասպարէզներուն մէջ եւ արժեցուց այն բոլոր պաշտօնները, որոնք վստահուեցան իրեն:

Երջանկայիշատակ Գարեգին Պատրիարք ծնաւ ու մեծցաւ Կ. Պոլսոյ կրօնաշունչ ու աւանդապաշտ մթնոլորտին մէջ: Տակաւին պատանի՝ ան կազմաւորուեցաւ ուրիշ կրօնաշունչ մթնոլորտի մը մէջ՝ Երուսաղէմի Հայոց Սրբոց Թակոռեանց մայրավանքին մէջ, ուր ստացաւ իր եկեղեցականի կարգը:

Երիտասարդ ու խոստումնալից վարդապետ, ան վերադարձաւ իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս, ուր աջակիցը եղաւ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի: Այստեղ Ս. Խաչ դպրեվանքին եւ այլ վարժարաններուն մէջ ծաւալեց ուսուցչական բեղմնաւոր գործունէութիւն՝ վայելելով իր աշակերտներու եւ գործակիցներու սէրն ու յարգանքը: Եղաւ Բանին կենաց քարոզիչ ծխական բազում եկեղեցիներու մէջ:

Հովուական ասպարէզին մէջ նոյնպէս ան ներկայացաւ որպէս գործունեայ ու եռանդուն, Հոգատար Հոգեւորական նախ Վաշինգտոնի մէջ որպէս Հոգեւոր Հովիւ, եւ ապա Աւստրալիոյ գաղութին մէջ՝ դառնալով այդ նորակազմ գաղութին առաջին Թեմակալ առաջնորդը:

Երկար տարիներ վանքէն դուրս ծառայութիւնը անոր մէջ քնաւ

չնուազեցուց փափաքն ու տենչը վանական խնկարոյր մթնոլորտին: Իր միաբանակից եղբայրներու կողմէ ընտրուեցաւ լուսարարապետ Երուսաղէմի Հայոց Պատրիարարաւթեան:

Իր նուիրումի ու ծառայութեան մէջ երջանիկ եղաւ ան, քանզի գինք ծնող ու սնող ազգը կրցաւ գնահատել իր հաւատարիմ մշակը եւ երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքի վախճանումով թափուր մնացած Աթոռին բարձրացուց գայն, որպէս Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ եւ Հոգեւոր Հայր Թուրքիոյ Հայութեան:

Կ. Պոլսոյ պատմական Աթոռին վրայ երջ. Պատրիարքի ցուպը եղաւ ու մնաց ծաղկեալ, քանզի իր գահակալութեան ութ տարիները եղան արգիւնաւէտ եւ պտղալից: Թուրքիոյ տարածքին վրայ մեր ունեցած եկեղեցիներն ու Համայնքային Հաստատութիւնները մնացին չէն եւ պայծառ: Իր գահակալութեան ընթացքին Սրբազան Պատրիարքը կրցաւ իր սէրն ու գուրգուրանքը տարածել անխտիր ամենուն եւ ամենուր, Կ. Պոլսէն մինչեւ Թուրքիոյ այլազան շրջանները:

Այս բոլորին մէջ ան մնաց էապէս հաւատարիմ զաւակը Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ անոր Հոգեւոր կեդրոնը եղող աստուծակառոյց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Ինչպէս Մեր երջանկայիշատակ նախորդին՝ անմոռանալի Վազգէն Վեհափառին, այնպէս ալ Մեր օրով ան բազմիցս այցելեց Մայր Աթոռ, աշխատեցաւ Մեզի հետ, եղաւ Մեր կողքին, բաժնեկից եղաւ Մեր ցաւերուն եւ ուրախութիւններուն:

Այսօր, մեր սիրեցեալ եղբօր՝ Գարեգին Պատրիարքի Ֆիզիքական ներկայութեանը հրաժեշտ տալու այս պահուն, մեր Եկեղեցւոյ Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածնէն խունկ եւ աղօթք կ'առաքենք անոր լոյս յիշատակին եւ բեղուն վաստակին: Սուրբ Հոգւոյ մխիթարութիւնը կը Հայցենք Կ. Պոլսոյ մեր Հոգեւոր դասուն՝ Արքեպիսկոպոսաց, վարդապետաց, արեղայից, քահանայից, Կրօնական Ժողովոյ անդամներուն, Համայնքային մարմիններուն եւ Համայն Հաւատացեալ մեր զաւակներուն համար: Կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած իր երկնային երանական խաղաղութեան մէջ Հանգչեցնէ Պատրիարք Սրբազան Հօր Հոգին ու զայն դասէ մեր լուսաւոր նախնիներուն շարքին: Թող միշտ պայծառ մնայ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռը: «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, եւ գերկրպառուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան. Ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

15 Մարտի 1998

Ի Ս. Էջմիածին